ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 02-Ա.01

«Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ինքնակարգավորվող կազմակերպության դիտորդ խորհրդի 10.02.2026թ. նիստի

ք.Երևան 10.02.2026թ.

Նիստին մասնակցում էին դիտորդ խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը (նիստի նախագահ), դիտորդ խորհրդի անդամներ Վահրամ Ապրեսյանը, Լևոն Պետրոսյանը, Խաչիկ Նազարյանը, Գարիկ Մկրտչյանը, Խաչիկ Ղահրամանյանը, Վարազդատ Ասատրյանը, Անդրանիկ Ելինյանը /նիստի քարտուղար/ :

Արձանագրվեց, որ ներկա են խորհրդի 7 /յոթ/ անդամներ, քվորումն ապահովված է, և դիտորդ խորհուրդը իրավազոր է անցնել օրակարգում ընդգրկված հարցերի քննարկմանը:

Օրակարգում ընդգրկված հարցեր՝

1. «Սնանկության գործերով կառավարիչների կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական վարչության կողմից վերահասցեագրված «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն Ա.Առաքելյանի 20.08.2025թ. և 25.08.2025թ. դիմումների հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.10.2025թ.-ի եզրակացության քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը որոշել է կառավարչի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի «ՀԱՅԷԿՈՆՈՄԲԱՆԿ» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն Ա.Առաքելյանի 20.08.2025թ. և 25.08.2025թ. դիմումների հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.10.2025թ-ի եզրակացությանը (կարգապահական տույժ՝ նկատողություն) հավանություն տալու մասին հարցը:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին խորհրդի նիստին ներկաները, որոնք հայտնեցին, որ իրենց կարծիքով «Ուստր Մամիկոն» ՍՊԸ-ի կառավարիչ Յուրիկ Օհանյանի կողմից թույլ է տրվել խախտումներ, այդ իսկ պատճառով դիտորդ խորհուրդը գտնում է, որ վերջինիս նկատմամբ պետք է կիրառել կարգապահան տույժ՝ նկատողություն:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց «Ուստր Մամիկոն» ՍՊԸ ընկերության սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանին կարգապահական տույժ՝ նկատողություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 1 «Ուստր Մամիկոն» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Յուրիկ Օհանյանի նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ նկատողություն:

2.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի վերաբերյալ՝ ՀՀ արդարադատության նախարարության վերահսկողական վարչության կողմից վերահասցեագրված Վարդգես Արմենի Սադոյանի դիմում-բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.12.2025թ.-ի եզրակացության քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման, քանի

որ դատարան ներկայացված նույնաբովանդակ բողոքը մերժվել է, առկա է ուժի մեջ մտած դատական ակտ:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին ներկաները՝ նշելով, որ ներկայացված բողոքը մերժելու մասին ուժի մեջ մտած դատական ակտի առկայության հիմքով բողոքը ենթակա է մերժման:

Դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի վերաբերյալ Վարդգես Արմենի Սադոյանի դիմում-բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.12.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 2. Հավանություն տալ Աննա Քիշմիրյանի սնանկության գործով կառավարիչ Արման Տոնոյանի վերաբերյալ Վարդգես Արմենի Սադոյանի դիմում-բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.12.2025թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին) :

3.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից «Տետ-ինվեստ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Զավեն Վարդանյանի վերաբերյալ՝ «Տետ-ինվեստ» ՍՊ ընկերության տնօրեն Տաթևիկ Ռուդիկի Հարությունյանի բողոքի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 29.12.2025թ.-ի եզրակացության քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Հարցի վերաբերյալ իրենց դիրքորոշումները հայտնեցին ներկաները և եկան այն եզրակացության, որ բողոք-դիմումը ծավալուն է, և կարգապահական հանձնաժողովի նիստերի ժամանակ ներկայացվել է լրացուցիչ բողոք-դիմում, ինչպես նաև հիմք ընունելով այն հանգամանքը, որ կառավարչի կողմից ներկայացված պատասխանը և կից փաստաթղթերը նույնպես ծավալուն են, ուստի այդ փաստաթղթերին և բողոք-դիմումին մանրամասն ծանոթնալու նպատակով նիստը հետաձգել և հարցը քննարկել հաջորդ խորհրդի նիստի ժամանակ:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 7, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	☑ Կողմ / □ Դեմ	

Որոշում 3. Նիստը հետաձգել և հարցը քննարկել հաջորդ խորհրդի նիստի ժամանակ:

4.«Սնանկության գործերով կառավարիչների Կոլեգիա» ԻԿ կազմակերպության Կարգապահական հանձնաժողովի կողմից «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 20.01.2026թ.-ի եզրակացության քննարկում:

Անդրանիկ Ելինյանը ներկայացրեց հարցի էությունը, հայտնեց, որ բողոքաբերի բողոքից հրաժարվելու հիմքով կարգապահական հանձնաժողովը եկել է այն եզրահանգման, որ կարգապահական վարույթը ենթակա է կարճման:

Նշվածի վերաբերյալ իրենց դիրքորոշումը հայտնեցին ներկաները և նշեցին, որ նման դեպքում վարույթը ենթակա է կարճման:

Խորհրդի նախագահ Տիգրան Սահակյանը հայտնեց, որ անհրաժեշտ է անդրադառնալ բողոքում բերված մի կարևոր հարցի՝ բողոքաբերի այն պնդմանը, որ պարտապան ընկերության հիմնադիրը օրենքի ուժով համարվում է պարտատեր: Հավելեց, որ իր կարծիքով պարտատերը կարող է համարվել միայն այն անձը, ով «Սնանկության մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացրել է պահանջ, կամ վերջինիս պահանջը ծագել է սնանկության վարույթի ընթացքում, և օբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված այդ պահանջը ենթակա է գրանցման կառավարչի կողմից /այդպիսիք են միայն հարկերը/:

Ներկաները համաձայնեցին նշված մոտեցմանը և արձանագրեցին, որ բողոքաբերի պնդումը հիմնավոր և իրավաչափ չէ:

<u>Քննարկումներն ավարտելուց հետո դիտորդ խորհրդի քննարկմանը ներկայացվեց</u> «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 20.01.2026թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելուն) հավանություն տալու մասին հարցը:

Քվեարկության արդյունքներ՝ կողմ 6, դեմ չկա

Տիգրան Սահակյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վարազդատ Ասատրյան	☑ Կողմ / □ Դեմ	
Վահրամ Ապրեսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչատուր Ղահրամանյան	☑ Կողմ / □ Դեմ	
Գարիկ Մկրտչյան	☑ Կողմ / □ Դեմ	
Լևոն Պետրոսյան	☑ Կողմ / □ Դեմ	
Խաչիկ Նազարյան	□ Կողմ / □ Դեմ	Չի մասնակցում

<u>Որոշում 4</u>. Հավանություն տալ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության սնանկության գործով կառավարիչ Խաչիկ Նազարյանի վերաբերյալ՝ «ՋԻՏԻԷՍ-ԻՄՄՕ» ՍՊ ընկերության ներկայացուցիչ Արթուր Հովհաննիսյանի դիմումի հիման վրա «ՍԳԿԿ» ԻԿ Դիտորդ խորհրդին 02.02.2026թ.-ին ներկայացված՝ 20.01.2026թ.-ի եզրակացությանը (կարգապահական վարույթը կարճելու մասին) :

Նիստի նախագահ՝ Տիգրան Սահակյան

Նիստի քարտուղար՝ Անդրանիկ Ելինյան